

«Ա.Դ. Սախարովի անվ. մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն»

Սյունիքի տարածաշրջանային մասնաճյուղ

**The A. D. Sakharov Armenian Human Rights Protection Centre**



**ՄԱՍՈՒԼԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

*Մարտ*

*2022թ.*

ՅԳՈՐԻԱ ՏՈ

31.03.2022

### Սյունիք. երգի և երաժշտության աստվածաշնորհ հայրենիք

Լույս է տեսել «Սյունյաց երկիր. մշակութային» եռամսյա հանդեսի 5-րդ համարը, որ նվիրված է երաժշտական Սյունիքին՝ վաղ միջնադարից մինչև մեր օրեր: Համարի ծավալը 17 տպագրական մամուլ է կամ 68 էջ A3 չափսի, տպաքանակը՝ 1000: Համարի բացառիկությունն այն է, որ առաջին անգամ ընդհանուր գծերով ի մի է բերվում, համակարգվում Սյունիքի երաժշտական աշխարհը պատմության ամբողջ կտրվածքով: Համարը բացվում է Սամվել Ալեքսանյանի առաջնորդող հոդվածով՝ «Երգը՝ ծնված հող հայրենիից և ոչ միայն ձայներից ու բառերից», որը ներկայացնում ենք ստորև:

\*\*\*

Նորից ականտես ենք սպասված ծննդի... Լույս աշխարհ է գալիս «Սյունյաց երկիր. մշակութային» եռամսյա պարբերականի 2022 թ. 1-ին համարը, որն այդ հանդեսի (ընդհանուր հաշվով) 5-րդ թողարկումն է: Այն նվիրված է Սյունիքի երաժշտական աշխարհին: Ընդ որում՝ առաջին փորձն է համակարգելու, ամփոփելու, ընդհանրացնելու, ի մի բերելու Սյունիքի երաժշտական անցյալն ու ներկան:

Ժամանակային ընդգրկումն է՝ վաղ միջնադարից մինչև մեր օրերը: Իսկ տարածքային ընդգրկվածության առումով երեք սկզբունք ենք որդեգրել:

**Առաջին.** հոգևոր երաժշտության հարցերն արծարծելիս ընդգրկել պատմական Սյունիքը, նույն մոտեցումը՝ նաև միջնադարյան քնարերգությունը ներկայացնելիս:

**Երկրորդ.** մյուս դեպքերում սահմանափակվել Սյունիքի մարզն ընդգրկող չորս տարածաշրջանը ներկայացնելով (Մեղրի, Կապան, Գորիս, Սիսիան):

**Երրորդ.** մասամբ անդրադարձ կատարել Գողթն գավառի երգերին ու երգիչներին՝ նկատի ունենալով պատմական ստույգ իրողությունը, որ գավառը տևական ժամանակ դուրս է եղել Վասպուրականից և մաս կազմել Սյունյաց աշխարհի: Հաշվի առնելով նաև Պատմահայր Խորենացու և Սյունիքի պատմիչ Ստեփանոս Օրբելյանի վկայությունները՝ գավառն ի սկզբանե Սյունիքի մեջ էր մտնում:

**Հաջորդ հարցը.** ի՞նչ նկատառումներով «Սյունյաց երկիր. մշակութային» հանդեսի 5-րդ համարը նվիրեցինք երաժշտական Սյունիքին:

Նախ՝ 2020 թ. նոյեմբերի 9-ից հետո Սյունիքը հայտնվել է ռազմաքաղաքական նոր և ծայր աստիճան մտահոգիչ իրավիճակում: 21-րդ դարում, այսպես կոչված քաղաքակիրթ աշխարհի անտարբեր հայացքի ներքո, անդամահատվել է հայոց սրբազան այս երկրամասը: Ավելին՝ մեր շուրջը շարունակում է իշխել անորոշությունը... Սյուս կողմից՝ քանիցս նշել ենք՝ Սյունիքում դարեր շարունակ, մեր պատմության ամենադժվարին հանգրվաններում անգամ, ամուր վեմի վրա է եղել երկրամասի հոգևոր-մշակութային կյանքը: Ու այդ ընթացքում բազմիցս արձանագրված մեր զենքի հաղթանակը, առանց չափազանցության, պայմանավորված է եղել նախ և առաջ գրի հաղթականով, լույսի հաղթանակով... Ներկա իրավիճակում նույնպես, համոզված ենք, բացառիկ առաքելություն ունի հոգևոր-մշակութային գործոնը, այդ թվում՝ հայ երգը:

Հաշվի առնելով տվյալ հանգամանքը՝ կամեցանք հավելյալ ուշադրություն հրավիրել Սյունիքի երաժշտական նկարագրի վրա: Եվ գործը նախաձեռնեցինք՝ համոզված լինելով՝ երգը հայրենատեր լինելու հոգու կանչ է, երգը խաչ է՝ խաչվածների վրա, երգը սահմանապահ է

ու զինվորին հաղթանակի կոչող ու մեր հայրենիքը մեզ մատնացույց անող բացառիկ երևույթ, երգը չի թողնի հուշ դառնա Սյունյաց աշխարհի՝ գերված-պատանդված որևէ մաս, երգը մեզանում մշտապես կրելի է դարձնում հայրենիքն ու կարոտել տալիս մեզ՝ մեր բնօրրանի ամեն մի անկյուն...

Համարում հեռու մնացինք բանավիճային թեմաներից, որոնք քիչ չեն: Օրինակ, Ստեփանոս Սյունեցի առաջի՞նն էր, թե՞ Ստեփանոս Սյունեցի երկրորդը, որ ամբողջացրեց սուրբ Հարության կարգը, որ նշանակալից ներդրում ունեցավ օրհներգության մեջ: Կամ՝ մեզ հայտնի միջնադարյան առաջին երաժիշտ- բանաստեղծուհի Սահակդո՞ւխտն է հեղինակը «Զարմանալի է ինձ» երգի, թե՞ Խոսրովիդուխտը: Կամ՝ իսկապե՞ս Դավթակ Քերթողը Սյունիքից էր, թե՞... Կամ՝ իսկապե՞ս Արամ Խաչատրյանը Գորիս կատարած այցի ընթացքում է ստեղծել «Գարուն Երևան» չքնաղ երգը: Եվ նման բազմաթիվ հարցեր, թեմաներ, որոնք կարող են խոսակցության առանձին նյութ դառնալ:

Համարի նախապատրաստության ընթացքում վերստին ակնհայտ դարձավ, որ Սյունիքի երաժշտական կյանքը եղել և մնում է բացառիկ հարուստ, ընդ որում՝ երաժշտության գրեթե բոլոր ոլորտներում: Այնպես որ՝ թերթային սույն համարի ծավալը մի քանի անգամ գերազանցող հանդես հրատարակելու դեպքում անգամ չէինք կարող ներկայացնել ամբողջը:

Պարարվեստին չանդրադարձանք. հավանաբար դա ապագայում կդառնա առանձին համարի թեմա: Երգարվեստի որոշ ոլորտներ նույնպես դուրս մնացին՝ ժողովրդական խաղիկներ, հորովելային արվեստ, մեր ազատագրական շարժման (պատմության տարբեր փուլերում) առաջնորդներին, մեր ինքնապաշտպանության հերոսներին ձևաված երգեր... Նույնիսկ հնարավորություն չունեցանք ընդգրկել հոգևոր երաժշտության նշանավոր բոլոր ներկայացուցիչներին (Սյունիքից) և այլն:

Առավել ամբողջական խոսք չասվեց մեր այն հայրենակիցների երաժշտական ժառանգության մասին, ովքեր հավերժորեն տեղ են զբաղեցնում հայոց երաժշտական արվեստի բարձրագույն կաճառում: Չվերլուծվեց և ընթերցողին չմատուցվեց Սյունիքին նվիրված կամ սյունիքյան թեմաներով նկարահանված գեղարվեստական ֆիլմերի երաժշտությունը, որը շատ հետաքրքիր նյութ է ու դեռևս չքննարկված, չամփոփված:

Հնարավորություն չունեցանք ի մի բերել մամուլի հրապարակումներն առնվազն վերջին հարյուր տարվա կտրվածքով՝ Սյունիքի երաժշտական կյանքին առնչվող: Մայրաքաղաքային ճանաչված խմբերի սյունիքյան հյուրախաղերի, մշակույթի օրերի, փառատոների ամբողջական տարեգրությունը կամ պատկերը չներկայացվեց: Չներկայացվեց Սյունիքի վարդապետարանի, Գլաձորի համալսարանի, Սյունյաց կամ Հարանց մեծ անապատի դերակատարությունը՝ մեզանում երաժշտական կրթության կազմակերպման, հայոց երաժշտության զարգացման գործում: Եվ, այդ բոլորով հանդերձ, հաջողվեց առաջին անգամ համակարգված ներկայացնել Սյունիքի երաժշտական փառավոր անցյալն ու ներկան: Հաջողվեց՝ շնորհիվ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի, Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի բազմաթիվ գիտաշխատողների, դասախոսների և հայրենական երգի մերօրյա նշանավոր ներկայացուցիչների աջակցության, ովքեր մեծագույն սիրով էին արձագանքում մեր խնդրանքին կամ առաջարկությանը, նաև հաճույքով խորհրդատվություն իրականացնում մեր խմբագրակազմի լրագրողներին:

Բոլորին, յուրաքանչյուրին՝ մեր անկեղծ երախտագիտությունը:

Մեր հարգանքը Սյունիքի մարզի համայնքային իշխանություններին՝ համագործակցության համար: Առանձնահատուկ շնորհակալություն «Էլոլա» ՓԲ ընկերությանը (տնօրեն՝ Հարություն Ծատրյան), «Ոսմար» ՍՊ ընկերությանը (տնօրեն՝ Հարություն Ոսկանյան), «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությանը (տնօրեն՝ Կարեն Մելքոնյան), «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությանը (տնօրեն՝ Դավիթ Մաշուրյան)՝ համարի նախապատրաստական աշխատանքներին նպաստելու համար:

Նախապատրաստական աշխատանքներն իրականացվեցին ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արայիկ Խզմալյանի, նախարարության գլխավոր մասնագետ Տաթևիկ Սուքիասյանի հետ սերտ համագործակցությամբ: Իսկ այն թեմաները, որոնք (ինչպես նշեցինք) դուրս են մնացել և՛ ժամանակի, և՛ հնարավորության սղության պատճառով, համոզված ենք, երբևէ կհետաքրքրեն ստեղծագործական այլ կոլեկտիվների, լրատվամիջոցների կամ հետազոտողների:

Ինչևէ, մեզ հաջողվեց օգտակար այս գործն ըստ պատշաճի կյանքի կոչել:

Եվ ուրեմն՝ օրհնություն, պատիվ և երկրպագություն բոլոր էություններին արարչին, որ կարողություն տվեց մեր հրաշալի խմբագրակազմին՝ նախաձեռնել այս գործն ու սեղմ շարադրանքով և համառոտությամբ ավարտին հասցնել:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/syuniq-ergi-ev-erazhshtutyanyan-astvatsashnorh-hayreniq>

**30.03.2022**

**7.5 մլրդ դրամի 31 սուբվենցիոն ծրագիր կիրականացվի Սյունիքում այս տարի (տեսանյութ)**

Աղբյուրը՝ <https://www.youtube.com/watch?v=Ee963N8tQ5E>

**29.03.2022**

### **Հարժիսում այս տարի կոյուղագիծ կկառուցվի**

Տաթև համայնքի ղեկավար Սամվել Լալայանը Հարժիսում հանդիպեց բնակիչների հետ և քննարկեց գյուղին առնչվող մի շարք հարցեր: Ներկաներն առաջարկեցին ֆոնդային հողերից նոր ընտանիքներին հողատարածք տրամադրել: Առաջարկն ընդունվեց և որոշվեց մոտ ժամանակներում հարցը քննարկել Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանի հետ և ընթացք տալ: Հանդիպմանը բարձրացվեցին նաև ճանապարհների բարեկարգման, գազամատակարարման, կոյուղագծի կառուցման, տրանսպորտի հետ կապված այլ հարցեր: Սամվել Լալայանը տեղեկացրեց, որ այս տարի սուբվենցիոն ծրագրերից մեկն էլ ուղղված է Հարժիսի կոյուղագծի կառուցմանը, որի համար նախատեսված է 70 մլն դրամ: Վերջինս տեղեկացրեց նաև, որ մոտ օրերս կմեկնարկեն Էլեկտրաէներգիայի մատակարարման, վառված լուսատուների փոխման, ճանապարհների փոսալցման աշխատանքները:

Համայնքի ղեկավարը վստահեցրեց, որ նման հանդիպումները շարունակական կլինեն:

Աղբյուրը՝ <https://www.facebook.com/TatevMunicipality/posts/310973391137895>

**28.03.2022**

**Զորավարժություններ են. Մեղրիի համայնքապետարանը հորդորում է կրակոցների ձայներ լսելու դեպքում չառաջացնել անհարկի խուճապ**

Մեղրի համայնքի հարգելի՛ բնակիչներ,

📌 տեղեկացնում ենք, որ ներկա պահին ռուսական սահմանապահ զորամասի հրաձգարանում կատարվում են կրակային զորավարժություններ: Զորավարժությունները կշարունակվեն մինչև մարտի 31-ը:

📌 Կրակոցների ձայներ լսելու դեպքում հորդորում ենք հանրության շրջանում չառաջացնել անհարկի խուճապ:

Աղբյուրը՝ <https://www.facebook.com/meghri.municipality/posts/352325736939120>

**28.03.2022**

### **Առուշ Առուշանյանն ազատ արձակվեց դատարանի դահլիճից**

Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գնել Գասպարյանը հրապարակեց Առուշ Առուշանյանի գործով վճիռը: Առուշ Առուշանյանի նկատմամբ պատիժը՝ 6 ամիս 12 օր ազատազրկում, պայմանականորեն չի կիրառվի, կնշականվի փորձաշրջան. նա ազատ արձակվեց դատարանի դահլիճից:

Դատախազը մեղադրական ճառով պահանջել էր մեղավոր ճանաչել Առուշանյանին և դատապարտել ազատազրկման՝ 9 տարի 6 ամիս ժամկետով: Պաշտպանության կողմը ճառով միջնորդել է արդարացնել վերջիններիս:

Հիշեցնենք, որ ի սկզբանե դատավոր Գնել Գասպարյանի վարույթում է եղել արտահերթ խորհրդարանական ընտրությունների ավարտից հետո հարուցված քրեական գործը՝ «Հայաստան» դաշինքի օգտին քվեարկելու համար ընտրակաշառք տալու վերաբերյալ, ընդ որում, ըստ ՀՔԾ-ի, որպես ընտրակաշառք է ներկայացվել դրամական աջակցությունը: Սույն գործի շրջանակներում հուլիսի 5-ին ձերբակալվել էր Գորիս համայնքի Քարահունջ բնակավայրի վարչական ղեկավար Լուսինե Ավետյանը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 149-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 4-րդ կետերով, 149.1-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 154.2-րդ հոդվածի 2-րդ մասով և 154.2-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված արարք կատարելու հատկանիշներով, ապա կալանավորվել, իսկ օրեր անց՝ դատախազի որոշմամբ գրավի դիմաց ազատ արձակվել: Ավետյանի ցուցմունքի հիման վրա Առուշ Առուշանյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 35-154.2-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի, 38-149-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի և 38-154.2-րդ հոդվածի 3-րդ մասի (քվեարկության գաղտնիությունը խախտելը, ընտրական իրավունքի իրականացմանը խոչընդոտելը) հատկանիշներով:

Սյուս քրեական գործը, որը միացվել է սույն վարույթին, ավելի վաղ է ուղարկվել դատարան և քննվում էր Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի նախագահ Նապոլեոն Օհանյանի վարույթում: Սույն գործով որպես մեղադրյալ ներգրավվելու մասին որոշման համաձայն՝ Ա.Առուշանյանն իր ընտանիքին պատկանող մեկ այլ ՍՊ ընկերությունում 2020թ. հունվար-փետրվար ամիսներին կատարված գույքագրմամբ արձանագրված շուրջ 33,000,000 ՀՀ դրամ պակասորդի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու և պատճառված վնասը հատուցելուն հարկադրելու նպատակով 2020թ. փետրվարին ընկերության պահեստ է կանչել ՍՊ ընկերության աշխատակցին և վերջինիս հետ հանդիպման ընթացքում ֆիզիկական բռնություն գործադրելով և բռնություն գործադրելու սպառնալիքով, որպես պատճառված ենթադրյալ վնասի դիմաց

փոխհատուցման միջոց՝ աշխատակցից պահանջել է իրեն տրամադրել նրան պատկանող «Նիսսան պայտֆայնդեր» մակնիշի ավտոմեքենան, բանկում գրավադնել կնոջ հարազատներին պատկանող բնակարանը և ստացած վարկային միջոցները տրամադրել իրեն:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/arush-arushanyann-azat-ardzakvets-datarani-dahlichits>

**24.03.2022**

### **Ավագանին հաստատեց Կապան համայնքի 2022-2026 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը**

Մարտի 24-ին Կապանի համայնքապետարանի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ավագանու հերթական նիստը, որը վարում էր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Գոռ Թադևոսյանը: Նիստին ներկա էին ավագանու 18 անդամներ: Օրակարգի նախագիծը, որն իր մեջ ներառում էր 34 հարց, դրվեց քվեարկության և ընդունվեց 15 կողմ, 3 ձեռնպահ արդյունքով:

Առաջին իսկ հարցով ավագանին հավանության արժանացրեց Կապան համայնքի 2022-2026թթ. հնգամյա զարգացման ծրագիրը, որը և՛ նախատեսված աշխատանքների ծավալով, և՛ գումարային արտահայտությամբ՝ ավելի քան 35 մլրդ 185 մլն դրամ, գերազանցում է նախորդ տարիների ծավալներին: Ավագանին նաև հաստատեց հաջորդ կետով քվեարկության դրված 2022 թվականի տարեկան աշխատանքային պլանը:

15 կողմ և 3 դեմ արդյունքներով փոփոխություն է կատարվել ավագանու 2021 թվականի ղեկտեմբերի 29-ի թիվ 143-Ա որոշման մեջ, որի նպատակը թիվ 11 ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի լուծարումից հետո խմբի գործունեությունը Կապանի թիվ 1 ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի կազմում շարունակելն ու գյուղական բնակավայրերում ակումբների գործունեությունը վերականգնելն էր:

Ավագանին կայացրեց նաև մի շարք այլ որոշումներ, որոնք առնչվում էին համայնքի բնականոն կենսագործունեությանը:

Ավագանու հերթական նիստը կկայանա 2022 թվականի ապրիլի 25-ին:

Օրակարգի հարցերին ավելի մանրամասն ծանոթանալու համար՝ կարող եք դիտել նիստի առցանց հեռարձակումը:

<https://www.youtube.com/watch?v=hww07Lp0D4M>

Աղբյուրը՝ <https://www.facebook.com/Kapanmunicipality/posts/1051050045488473>

**23.03.2022**

### **Ռուս սահմանապահներն անցակետ են դրել Ներքին Հանդ գյուղի մոտ. Պապիկյանի պարզաբանումը**

Ներքին Հանդ մտնելիս ռուս սահմանապահներն ինչ-որ անցակետ են տեղադրում: ԱԺ-կառավարություն հարց ու պատասխանի ժամանակ ասաց «Հայաստան» խմբակցության պատգամավոր Աննա Գրիգորյանը: «Մարդիկ ինձ հարցնում են՝ դա ի՞նչ անցակետ է, միգուցե սա մեծ պլանի ինչ-որ հատված է», - պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանին դիմեց Աննա Գրիգորյանը:

Պապիկյանն ասաց. «Դա Ներքին Հանդ տանող անցակետ չէ, դա ճանապարհի վերահսկողության համար է: Ես ինքս եղել եմ Ներքին Հանդում, տեղակայման վայրում: Այո, դա ժամանակ առ ժամանակ, օրվա մեջ մի քանի անգամ երթևեկող սահմանապահ զորքերի մասին է խոսքը, այստեղ որևէ խնդիր չկա: Որևէ մեկի համար համայնք մտնելը խոչընդոտ չէ: Անցակետը, եթե ձեր դիտարկմամբ նայենք, պիտի մարդուն ստուգեն, բայց նման բան չի լինելու: Եթե կլինի ինչ-որ մեկի կողմից, խնդրում եմ տեղեկացնել, որովհետև որևէ մեկը դրա իրավունքը չունի: Եվ չկա նման անհրաժեշտություն, որ այդ համայնքի ճանապարհին լինի անցակետ, դա ուղղակի խաչմերուկ է, այդ խաչմերուկը դիտարկվում է ողջ ճանապարհի երկայնքով: Այդ խաչմերուկից դիտարկվում են նաև հակառակորդի դիրքերը»:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/rus-sahmanapahnern-antsaket-en-drel-nerqin-hand-gyukhi-mot-papikyani-parzabanumy>

**21.03.2022**

### **Շինուհայրի խաչմերուկ-Կապան ճանապարհը՝ կաթվածահար**

Հայաստանի հարավային շրջանները՝ Մեղրին, Քաջարանը, Կապանը, ինչպես և Իրանի Իսլամական Հանրապետությունը Գորիս- Երևան (Մ-2) մայրուղուն միացնող ճանապարհը կաթվածահար վիճակում է...

Շինուհայրի խաչմերուկից մինչև Կապան տասնյակ, եթե ոչ հարյուրավոր մեքենաներ են կանգնած, մի մասը՝ ձյան մեջ արգելափակված և տեղից շարժվելուն անկարող:

Երեք օր շարունակ ձյան շրջափակման մեջ են հայտնվել Իրանից Հայաստան եկող տասնյակ ավտոբուսներ, որոնց մեջ, բնականաբար, նաև երեխաներ են ու կանայք:

Շրջափակման մեջ են ծանրաքաշ բեռնատարներ, նաև՝ կցորդով, որոնց թափքում Հայաստանում գնված և Պարսկաստան տեղափոխվող խոշոր եղջերավոր անասուններ են. այդպես՝ երեք օր շարունակ...

Բեռնատարների առանձնապես մեծ կուտակումներ կան Կապան քաղաքի մուտքում, Սատանի կամրջում, Շինուհայրի խաչմերուկում և բազմաթիվ այլ վայրերում:

Այդ ամենը գուցե և բնության հերթական քմահաճ տարերք համարեինք, եթե... Եթե ճանապարհին ձյունամաքիչ մեքենաները կանոնավոր աշխատանք իրականացնեին:

Միակ տեղը, որ նման աշխատանքի ականատես եղանք՝ Սատանի կամրջից մինչև Տաթև ընկած ոլորաններն էին:

Իսկ Վերին Խոտանան-Տաթև հատվածում գոնե մեկ ձյունամաքիչ մեքենա չէր աշխատում (Ժամը 13-ի դրությամբ): Երկու անսարք ձյունամաքիչ գտնվում էին Տանձավերի մերձակայքում՝ օգնություն աղերսող:

Եվ, այդ բոլորով հանդերձ, ամեն ինչ չէ, որ մեզանում հուսահատեցնող է. կարևորն այն է, որ երկու օր առաջ մարզում ստեղծվել է ճանապարհային այդ խնդիրների լուծումը համակարգող օպերատիվ շտաբ, ինչի մասին, իբրև կարևոր իրադարձություն, ազդարարեց նաև Արմենպրես լրատվական գործակալությունը...

Իսկ ավելի լուրջ՝ որպեսզի այդ շտաբի ծնունդն ու գովազդը համընդհանուր քմիծաղի տեղիք չտան, պետք է գոնե մի քանի հավելյալ ձյունամաքիչ մեքենա անհապաղ տրամադրվի (օգնության կարգով) այդ ճանապարհի պահպանությունն իրականացնող ընկերություններին:

«Ճանապարհային դեպարտամենտ» կոչվող հիմնադրամն էլ այսպիսի իրավիճակներում ավելի խոհեմ կգտնվի, եթե ընդհանրապես լռի: Հայտարարում է, թե իբր ձնաբուքը թույլ չի տալիս մաքրել խնդրո առարկա մայրուղին, ինչը չի համապատասխանում իրականությանը:

Այսօր առավոտվանից, օրինակ, գրեթե դադարել էին ձյան տեղումները Շինուհայրի խաչմերուկ-Կապան մայրուղում, իսկ քամին դեռևս գլուխ չեր բարձրացրել: Իրավիճակը բարենպաստ է նաև հիմա՝ կեսօրից հետո: Եվ ուրեմն՝ պարոնայք, ինչո՞ւ անցանելի չեք դարձնում Շինուհայրի խաչմերուկ-Կապան ավտոմայրուղին, ինչո՞ւ եք կաթվածահար արել Հայաստանի համար կյանքի այդ ճանապարհը:

Մեկ հարց ևս, որ շտապ պարզաբանման կարիք ունի. արդյո՞ք պետական մակարդակով ֆինանսավորվում է Վերին Խոտանան-Տանձավեր ճանապարհահատվածի պահպանությունը, եթե այո, ապա ո՞ր ընկերությանն է վստահված մայրուղու այդ հատվածի պահպանությունը և ինչո՞ւ է ձախողվել դրա պահպանությունը:

Ի դեպ, Գորիսից Երևան ձգվող Մ-2 ճանապարհն էլ ռիսկեր էր պարունակում առավոտվանից, ինչի համար էլ քաղաքի մուտքի մոտ ոստիկաններ էին հերթապահում...

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/shinuhayri-khachmeruk-kapan-chanaparhy-katvatsahar>

**20.03.2022**

### **Գորիսում արտակարգ իրավիճակ է՝ պայմանավորված ձյան առատ տեղումներով**

Սյունիքի մարզում մի քանի օր առաջ սկիզբ առած ձյան տեղումները ոչ միայն չեն դադարում, այլև անազնանում են... Հիմա արդեն կարող ենք ստույգ արձանագրել՝ բնության նման քմահաճույքին դիմագրավելուն նույնպես պատրաստ չէինք... Դա հատկապես երեւում է Գորիս քաղաքում եւ տարածաշրջանային այդ կենտրոնը մերձակա գյուղերին կապող ճանապարհներին: Իհարկե, Մ-2 մայրուղում եւ Շինուհայրի խաչմերուկից Տաթեւ ձգվող ճանապարհին ջանադրաբար աշխատում են «Ոսմար» ՄՊ ընկերության ձյունաքրիչ մեքենաները: Գորիս քաղաքում էլ աշխատում է համայնքային տնտեսությանը պատկանող ձյունաքրիչ մեքենան, բայց...

Ստեղծված անսովոր վիճակը, որի նախադեպն ունեցել ենք տասնյակ տարիներ առաջ, պետք է արդեն իսկ ոտքի հանած լիներ տարածաշրջանի բոլոր այն շինկազմակերպություններին եւ տնտեսվարող մյուս սուբյեկտներին, որոնք ունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:

Գորիսում բազմաթիվ շինարարական կազմակերպություններ ունենք, ովքեր տարիներ շարունակ ինչ-ինչ մրցույթներում եւ ինչ-ինչ ուղիներով հաղթող են ձանաչվել եւ պետպատվերով ոչ միայն գոյատեւել, այլև փթթել...

Ինչո՞ւ չպետք է հենց այդ կազմակերպությունները (առաջին հերթին) իրենց տեխնիկական հնարավորությունները ծառայեցնեն ճանապարհների եւ փողոցների մաքրմանը:

Հետո ի՞նչ, որ նրանց ասող-հուշող չկա...

Հետո ի՞նչ, որ ասողներն էլ դա չեն հասկանում...

Այո, անհրաժեշտ է ոտքի հանել լրացուցիչ ձյունաքրիչ տեխնիկա:



Պետք է նաև նկատի ունենալ, որ ձյան տեղումները դադարելուց հետո (ինչպես ավանդաբար տեղի է ունենում այս կողմերում) ձնաբուքն անխուսափելի է լինելու՝ դրանից բխող հետեւանքներով:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/gorisum-artakarg-iravichak-e-paymanavorvats-dzyan-arat-tekhumnerov>

**17.03.2022**

### **Մեկնարկում է Կապանի կրթական նոր մոդելի իրագործումը. պահուստային ֆոնդից միջոցներ են հատկացվել**

Կառավարության որոշմամբ պետական բյուջեի պահուստային ֆոնդից ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը հատկացվել է 67 մլն 125 հազար դրամ գումար՝ Սյունիքի մարզի Կապան խոշորացված համայնքի կրթական նոր ծառայությունների ներդրման ծրագրի մեկնարկման և «Ճանապարհաշինարար» արձանի գեղարվեստական լուսավորման համար:

Նախագծի ներկայացման ժամանակ ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանը նշել է, որ հատկացումն արվում է ՀՀ կառավարության՝ կրթական ռեֆորմների շարունակականությունն ապահովելու հանձնառության շրջանակում:

Վահրամ Դումանյանի տեղեկացմամբ՝ վերոնշյալ գումարից շուրջ 60 մլն դրամը նախատեսված է Կապան խոշորացված համայնքի 13 գյուղական բնակավայրերում կրթական որակյալ ծառայությունների հասանելիության ապահովման նպատակով կրթահամալիրների ստեղծման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության համար: Նախատեսված է իրականացնել կրթահամալիրների վերակառուցման և կառուցման աշխատանքներ: Ստորև ներկայացվում են նախատեսվող աշխատանքները՝ ըստ բնակավայրերի.

#### **Կրթահամալիրների վերակառուցում**

- Աճանան
- Օխտար
- Արծվանիկ
- Գեղանուշ
- Սյունիք
- Եղեգ
- Ծավ
- Ճակատեն

#### **Նոր կրթահամալիրների կառուցում**

- Ներքին հանդ
- Շիկահող

#### **Մոդուլային կրթական հաստատությունների կառուցում**

- Վերին Խոտանան
- Դավիթ Բեկ
- Եղվարդ

Նշված բոլոր բնակավայրերը աշխատանքների ավարտից հետո կունենան ժամանակակից կրթական շենքային պայմաններ՝ ապահովված համապատասխան լաբորատորիաներով, մարզադահլիճներով և այլ անհրաժեշտ ենթակառուցվածքներով: Նոր կրթահամալիրներում կկազմակերպվեն նախադպրոցական և հանրակրթական ծառայություններ, ինչպես նաև կիրականացվեն լրացուցիչ կրթական ծրագրեր՝ ըստ համայնքների կարիքների: Նոր կրթօջախները կծառայեն նաև որպես բնակավայրի մշակութային և մարզական կենտրոններ:

Նոր կրթահամալիրներից 7-ը կծառայեն նաև շրջակա բնակավայրերի երեխաների համար: Այդ նպատակով կգործարկվեն 8 երթուղիներ՝ դրանց սպասարկման համար ձեռքբերված տրանսպորտային միջոցներով, որոնք կունենան վարորդ և ուղեկցորդ:

ԿԳՄՍ նախարարը նաև տեղեկացրել է, որ Կապանի ծրագրի իրագործման կազմակերպչական խնդիրները տեղում արձանագրելու նպատակով նախարարության ներկայացուցիչները Հայաստանի մանուկների հիմնադրամի և այլ գործընկերների հետ վերջերս այցելել են Սյունիք: Տեղում կատարված դիտարկումների արդյունքներով որոշվել է Սիսիանի թիվ 1 հիմնական, Կապանի թիվ 9 ավագ և Գորիսի թիվ 4 ավագ դպրոցները ներառել Կառավարության ծրագրով հիմնանորոգվող 300 դպրոցների պետական ծրագրում: Քննարկվում է նաև «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի աջակցությամբ Կապանի գյուղական բնակավայրերից մեկում սմարթ կենտրոնի կառուցման ծրագիրը:

Նախարար Վահրամ Դումանյանը նաև նշել է, որ նույն որոշմամբ՝ Չարենցավան համայնքում գտնվող «Ճանապարհաշինարարներ» արձանի տարածքի լուսավորության ցանցի անցկացման համար կհատկացվի շուրջ 7 մլն դրամ գումար:

Արձանի հիմնանորոգումը կատարվել էր 2021 թվականի՝ հուշարձանների նորոգման ծրագրով:

Կառավարության նիստի ընթացքում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, անդրադառնալով պահուստային ֆոնդից ԿԳՄՍ ոլորտներին ուղղված հատկացումներին, ընդգծել է, որ կրթության համակարգի բարելավումը պետական համալիր ռազմավարություն է, և դրա ամբողջական իրագործումը միայն մեկ գերատեսչության խնդիր չէ:

«Կրթության ոլորտում Կառավարության ծրագրով նախանշված ծրագրերը պետական առաջնահերթություն են», - շեշտել է նա:

Վարչապետը կարևորել է նաև իրականացվող աշխատանքների նկատմամբ հանրային վերաբերմունքի ձևավորման խնդիրը՝ որպես մտահոգություն նշելով, որ «Ճանապարհաշինարարներ» արձանը մի քանի անգամ կողոպտվել է: Վարչապետը շեշտել է, որ նման դեպքերը պետք է բացառվեն, և ոստիկանությունը արձանի պահպանման համար պատասխանատվություն է կրում:

Աղբյուրը՝

<https://hy.armradio.am/2022/03/17/%D5%B4%D5%A5%D5%AF%D5%B6%D5%A1%D6%80%D5%AF%D5%B8%D6%82%D5%B4-%D5%A7-%D5%AF%D5%A1%D5%BA%D5%A1%D5%B6%D5%AB-%D5%AF%D6%80%D5%A9%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B6%D5%B8%D6%80-%D5%B4%D5%B8%D5%A4%D5%A5%D5%AC/>

16.03.2022

**Միսիանում արդեն մեկ ամիս է՝ հասարակական տրանսպորտ չի աշխատում. «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արթուր Սարգսյան**

Միսիանում արդեն մեկ ամիս է՝ հասարակական տրանսպորտ չի աշխատում: Հայտարարվել է մրցույթ, սակայն ցանկացողներ չեն եղել: Այս մասին մարտի 16-ին ԱԺ տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության եւ շրջակա միջավայրի պահպանության մշտական խորհրդարանական հանձնաժողովի նիստում հայտարարեց Միսիան խոշորացված համայնքի նախկին ղեկավար, «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արթուր Սարգսյանը՝ դիմելով տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանին:

Պատճառը, ինչպես նշեց պատգամավորը, եկամտի ու շահույթի բացակայությունն է:

«Միսիանում 30 գյուղ է խոշորացման ենթարկվել, բայց տրանսպորտով ապահովման հարցը չի լուծվել», - նշեց ընդդիմադիրը:

Հարցը, ըստ նախարարի, կարելու է, քանի որ նման խնդիր հանրապետության այլ մարզերում եւս կա: Կառավարության ներկայացուցչի հավաստիացմամբ՝ օրերս ինքը եղել է Սյունիքի մարզում, որտեղ տեղեկացրել են խնդրի մասին:

«Միսիանի քաղաքապետը երեկ եկել էր մեր նախարարություն: Եթե այլ մարզերի դեպքում մրցույթ կազմակերպելը բավականին հեշտ է, ապա Սյունիքի մարզում ամեն ինչ մի փոքր այլ է: Ցավոք, կան շահավետ եւ անշահավետ երթուղիներ: Կան բազմաթիվ բնակավայրեր, որոնք զրկված են կայուն երթուղային գծից: Ուստի մենք մտածել ենք, որ մրցույթում հաղթած ընկերությունը մեկի փոխարեն միանգամից երկու գիծ սպասարկի», - պարզաբանեց Սանոսյանը:

Աղբյուրը՝ <https://news.am/arm/news/691782.html>

15.03.2022

**Աղբբեջանցի զինյալներն առաջ են եկել Ներքին Հանդի ուղղությամբ՝ հերթական անգամ դիրքավորվելով Սյունիքի տարածքում**

Համացանցում սփռվեց տեղեկատվություն այն մասին, որ աղբբեջանական զինված ուժերը Կապան համայնքի Ներքին Հանդ գյուղում մոտ մեկ կիլոմետր առաջ են եկել: Հավելյալ տեղեկություններ ստանալու նպատակով հեռախոսագրույց ունեցանք գյուղի վարչական ղեկավար Խաչատուր Բաղդասարյանի հետ:

- Դեպքը տեղի է ունեցել մարտի 5-ին, - տեղեկացրեց վարչական ղեկավարը: -

Աղբբեջանցիները սարում տեղակայված իրենց դիրքից իջել, մոտ 800-900 մետր առաջանալով՝ վրաններ են խփել հարթ մի տարածքում, ինչի արդյունքում դիտարկվում են գյուղի գերեզմանոցը, հին գյուղը, արոտավայրերը: Նաև ցանկանում էին ճանապարհ գցել, բայց երկու օր է՝ դադարեցվել են աշխատանքները: Չգիտեմ՝ դա ռուս խաղաղապահների՞, թե՞ ՀՀ պաշտպանության նախարարության շնորհիվ է, կոնկրետ չեմ կարող ասել, - տեղեկացրեց վարչական ղեկավարը և հավելեց, որ պաշտպանության նախարարությունից եկել և նրանց պոստի դիմաց մեր պոստն են դրել:

Հետաքրքրվեցինք, թե արդյո՞ք խուճապային տրամադրություններ չկան գյուղում:

- Որպես այդպիսին՝ խուճապային տրամադրություններ չկան, բայց բնակչության շրջանում առկա է որոշակի անհանգստություն: Մի բարերար տնկիներ էր ուղարկել, որ գյուղացիներն այգի հիմնեն, բայց այդ տարածքը դիտարկվում է հակառակորդի կողմից, մարդիկ վախենում են այդտեղ գյուղատնտեսական աշխատանքներ կատարել, - ասաց Խաչատուր Բաղդասարյանը:

Վարչական ղեկավարը նաև նշեց, որ Կապանի համայնքապետարանի՝ սահմանների անվտանգության գծով աշխատակիցներն ամեն օր լինում են գյուղում:

Այնուամենայնիվ, Կապանի սահմաններում տեղի ունեցած այս միջադեպը լուրջ խորհրդածությունների առատ նյութ պիտի լինի երկրի բարձրագույն իշխանությունների և պաշտպանության նախարարության բարձրաստիճան գինվորականության համար:

Ինչպե՞ս կարելի է չհիշել Նժդեհի խոսքը՝ թուրքի մի հանցանքը ներել, կնշանակի երկու նորերն արտոնել...

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/adrbejantsi-zinyalnern-araj-en-ekel-nerqin-handi-ukhutyamb-hertakan-angam-dirqavorvelov-syuniqi-taratsqum>

**14.03.2022**

### **Ներկայացվեց Սյունիքի նորանշանակ մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը**

Սյունիքի մարզպետարանում մարտի 14-ին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանը Սյունիքի նորանշանակ մարզպետ Ռոբերտ Ղուկասյանին ներկայացրեց մարզպետարանի աշխատակազմին:

Հանդիպմանը մասնակցում էին Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ Տեր Մակար վարդապետ Մկրտչյանը, մարզի համայնքների ղեկավարներ, իրավապահ մարմինների և գինվորականության բարձրաստիճան ներկայացուցիչներ:

Նախարար Գ. Սանոսյանը շնորհակալություն հայտնեց Սյունիքի արդեն նախկին մարզպետ Մելիքսեթ Պողոսյանին, ով տարածաշրջանի համար բարդ ու դժվարին ժամանակաշրջանում համաձայնվեց ստանձնել մարզի ղեկավարի պաշտոնը և պատվով կատարեց իր առջև դրված խնդիրները: Նաև համոզմունք հայտնեց, որ Մելիքսեթ Պողոսյանը պետական ոլորտում կշարունակի աշխատանքը՝ իր փորձն ու հմտությունը ներդնելով Սյունիքն ամրացնելու հայրենանվեր գործում:

Նորանշանակ մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը, ով վերջին երկու տարում Սյունիքի հարցերով միջգերատեսչական աշխատանքային խմբի ղեկավարն էր, նշեց, որ մարդկանց հետ ծանոթանալու խնդիր չունի, ինչ վերաբերում է հիմնախնդիրներին, դրանց մի մասի լուծման մեկնարկն արդեն տրված է, մնում է տրամաբանական ավարտին հասցնել:

Վերջում Սյունիքի նախկին մարզպետ Մելիքսեթ Պողոսյանը շնորհակալություն հայտնեց նրանց, ովքեր իր հետ մեկ տարուց ավելի ժամանակաշրջանում ճանապարհ են անցել, նաև ներկայացրեց իր պաշտոնավարման ընթացքում արված կարևոր գործերը և իր բարեմաղթանքները հղեց գեղեցիկ սեռի ներկայացուցիչներին՝ կանանց միամսյակի առթիվ:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/nerkayatsvets-syuniqi-noranshanak-marzpet-robert-khukasyany>

**06.03.2022**

**Վերանորոգման աշխատանքներ են ընթանում Ագարակի մանկապարտեզի Կարճևանի մասնաճյուղում**

Մոտ երկու ամիս առաջ էլեկտրական լարերի կարճ միացումից Ագարակի մանկապարտեզի Կարճևանի մասնաճյուղում հրդեհ էր բռնկվել: Ներկա պահին մանկապարտեզում ընթանում են վերանորոգման աշխատանքներ: Ֆինանսավորումն իրականացվում է «Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ-ի և Մեղրիի համայնքապետարանի ու «Մեղրիի կոմունալ տնտեսություն, բարեկարգում» ՀՈԱԿ-ի համատեղ ջանքերով: Մանկապարտեզում հին դռներն ու պատուհաններն արդեն փոխվել են նոր եվրոդռներով ու եվրոպատուհաններով: Վերանորոգման աշխատանքներն ակտիվ ընթացքի մեջ են:

Աղբյուրը՝ <https://www.facebook.com/meghri.municipality/posts/337952625043098>

**01.03.2022**

**ՊԵԿ քննչական վարչությունում քննվող քրեական գործի շրջանակում պետական բյուջե է վերականգնվել աննախադեպ՝ շուրջ 15 մլրդ ՀՀ դրամ գումար**

ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՎՃԱՐՎԵԼ Է ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾՈՎ ՄԵՂԱԴՐՅԱԼ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԿԻՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության վարույթում ՀՀ քրեական օրենսգրքի մի շարք հոդվածների հատկանիշներով քննվող բազմադրվագ քրեական գործի նախաքննության ընթացքում, առանձնապես խոշոր չափերով հարկեր չվճարելու առերևույթ հանցագործության դեպքի առթիվ, ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցված և տվյալ քրեական գործին միացված քրեական գործի քննությամբ պարզվել է, որ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության նախկին գործադիր մարմնի ղեկավար՝ գլխավոր տնօրեն հանդիսացող անձը, ղեկավարելով ընկերության կողմից կազմակերպված և իրականացված շահույթ հետապնդող ձեռնարկատիրական գործունեությունը, առանձնապես խոշոր չափերով հարկեր չվճարելու նպատակով, օտարերկրյա պետություններում գրանցված և իր հետ փոխկապակցված ոչ ռեզիդենտ համարվող կազմակերպությունների միջոցով և վերջիններիս անունից հատուկ մշակված և կիրառված սխեմայով, կատարել է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ արտադրանքի՝ պղնձի խտանյութի շուկայականից էականորեն ցածր արժեքով մատակարարման գործարքներ, որի հետևանքով ընկերության հարկվող շահույթը պակաս է ցույց տրվել և արդյունքում պետական բյուջե չի վճարվել 15.017.640.469 ՀՀ դրամ հարկեր և վճարներ:

Այսպես, քրեական գործի նախաքննության ընթացքում իրականացված բազմաձև վալ քննչական և դատավարական գործողությունների, այդ թվում՝ հարցաքննությունների, խուզարկությունների, ազգրավվումների, զննումների և այլ գործողությունների արդյունքում ամբողջությամբ բացահայտվել և հիմնավորվել է վերը նկարագրված հանցավոր սխեմայի իրական բովանդակությունն ու նպատակը: Մասնավորապես՝ քննությամբ հիմնավորվել է, որ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ նախկին գործադիր մարմնի ղեկավար հանդիսացող անձը, «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության՝ որպես պղնձի խտանյութի մատակարար և Արաբական Միացյալ Էմիրություններում հաշվառված, փաստացի որևէ տնտեսական գործունեություն չիրականացնող ոչ ռեզիդենտ

կազմակերպությունների հետ ձևականորեն կնքված մատակարարման պայմանագրերի հիման վրա հաշվապահորեն ձևակերպվել է, թե իբր պղնձի խտանյութը դրա շուկայական գնից ակնհայտ ցածր արժեքով մատակարարվել է այդ կազմակերպություններին, այնինչ փաստացի պղնձի խտանյութը միջազգային շուկայական արժեքներով անմիջապես մատակարարվել է իրական գնորդ հանդիսացող և պղնձի խտանյութի վերամշակմամբ զբաղվող օտարերկրյա կազմակերպություններին: Այնուհետև Արաբական Միացյալ Էմիրություններում հաշվառված կազմակերպությունների բանկային հաշիվներին իրական գնորդ հանդիսացող կազմակերպություններից ստանալով ձեռք բերված պղնձի խտանյութի իրական արժեքի վճարումները, այդ գումարների մի մասը փոխանցել է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ հաշիվներին, իսկ կիրառված սխեմայի արդյունքում գոյացած ֆինանսական միջոցների գերակշիռ մասը տնօրինել և ծախսել է այլ ուղղություններով: Նման եղանակով ընկերության ղեկավար անձի կողմից «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության իրական շահույթը տեղափոխվել է օտարերկրյա կազմակերպությունների ռեզիդենտության երկրներ՝ այդ կերպ զրկելով Հայաստանի Հանրապետությանն իրական արժեքներով մատակարարումներից գոյացած հարկվող շահույթը հարկելու հնարավորությունից:

Քրեական գործով ձեռք բերված բավարար ապացույցների համակցության հիման վրա «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության նախկին գործադիր մարմնի ղեկավար՝ գլխավոր տնօրենին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցավոր արարք կատարելու՝ առանձնապես խոշոր չափերով հարկեր չվճարելու համար:

Քրեական գործի նախաքննության ընթացքում ձեռք բերված համապատասխան ելակետային տվյալների հիման վրա 2021 թվականի դեկտեմբերի 29-ին կազմվել է ստուգման ակտ և առաջադրվել լրացուցիչ գանձման ենթակա ընդհանուր 15.017.640.469 ՀՀ դրամ պարտավորություններ, որոնք 2022թ.-ին ամբողջությամբ վճարվել են պետական բյուջե:

Հատկանշական է, որ 2017-2019թթ. ընկերության իրական հարկվող շահույթը պակասուց տալու հետևանքով հարկերի և վճարների տեսքով պետությանը պատճառված 15.017.640.469 ՀՀ դրամ գումարը՝ տույժերով և քրեական գործով հանդերձ, վերականգնվել է ոչ թե «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ գործող ակտիվների հաշվին, այլ՝ սույն քրեական գործով մեղադրյալ ընկերության նախկին գործադիր մարմնի ղեկավարի կողմից՝ վերջինիս անձնական միջոցներից:

Ծանուցում. ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

Աղբյուրը՝ <https://www.petekamutner.am/mdNews.aspx?sid=src&nid=8854>

**01.03.2022**

**ԱՅՑ ՇՈՒՌՆՈՒՄ. մարզպետն ու Քաղաքաշինության կոմիտեի նախագահը ծանոթացան բնակելի տների կառուցման աշխատանքներին**

Փետրվարի 28-ին Սյունիքի մարզպետ Մելիքսեթ Պողոսյանը ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահ Արմեն Ղուլարյանի հետ այցելել է Շուռնուխ գյուղ՝ ծանոթանալու պետական միջոցներով այստեղ կառուցվող բնակելի նոր թաղամասի շինաշխատանքներին:

Պատերազմից հետո տունը կորցրած շուռնուխցիների համար 170 քմ մակերեսով 13 տուն է կառուցվում, որոնցից չորսը շուտով պատրաստ կլինի: Պաշտոնյաները շինարարի հետ դիտարկել են աշխատանքների ընթացքն ու մինչ այժմ արվածի արդյունքները:

Արդեն սկսվել են ներքին հարդարման աշխատանքները, տները տերերին կհանձնվեն ամբողջովին նորոգված ու ավարտուն տեսքով:

Աղբյուրը՝ [http://syunik.mtad.am/news/item/2022/03/01/Shurnukh\\_new\\_houses/](http://syunik.mtad.am/news/item/2022/03/01/Shurnukh_new_houses/)

Կազմող՝ Ս. Ալավերդյան